ՀԱՍՄԻԿ ՎԱՆՅԱՆ

ԵՐԳԻՇԱՆՔԸ ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԵՋ

Հայ միջնադարյան գրականությունը բնույթով համադրական է. ժամանակի պահանջով կրելով կրոնաեկեղեցական աշխարհայացքի ակնառու ազդեցությունը՝ այն միաժամանակ ստացել է աշխարհիկ բովանդակություն: Նման համադրականությամբ է բնորոշվում նաև հայ ոսկեդարյան (5-րդ դար) գրականության ժանրային համակարգը, մասնավորապես՝ պատմագրությունը, որը, իբրև հասարակության գեղարվեստական գիտակցության գլխավոր արտահայտիչ, թե՛ հայ կյանքի պատմական տարեգրությունն էր և թե՛ ժողովրդի ստեղծած գեղարվեստական արժեքների շտեմարանը: Այս իմաստով բացառություն չէ վաթսունհինգ տարվա (319-384) պատմություն ընդգրկող «Փաւստոսի Բուզանդացւոյ պատմութիւն Հայոց» աշխատությունը, որը, որոշ ստվերներով հանդերձ (ժամանակագրության մասնակի բացակայություն, անախրոնիզմ, գլուխների ոչ հաջորդական դասավորություն...), ներկայացնում է պատմագիտական ու հատկապես գեղարվեստական բացառիկ արժեք, հանգամանք, որը չի վրիպել ուսումնասիրողների տեսադաշտից: Բայց ահա Փավստոսի Պատմության մեջ առկա այնպիսի մի հարուստ շերտ, ինչպիսին երգիծանքն է, դեռևս առանձին քննության նյութ չի դարձել:

Երգիծաբանությունը քննադատության ու ինքնաքննադատության հիմնական ոլորտն է գեղարվեստական գրականության մեջ: Գեղագիտական արժեք ունեցող յուրաքանչյուր երգիծանք քննադատություն է, սակայն ամեն մի քննադատություն դեռևս երգիծանք չէ, քանի որ երգիծանքի էությունն իր երկու՝ ժխտող ու հաստատող նախասկիզբների հակադրամիասնության մեջ է: Հայտնի է, որ կոմիկականի բուն ոլորտը մարդն է, մարդկային հասարակությունը, մարդկային կյանքը: Այդ պատճառով երգիծանքի համար կարևոր են ոչ միայն մարդու բնական ունակությունները, ֆիզիոլոգիան ու հոգեբանությունը, այլև հասարակական հարաբերությունները և իրականության նկատմամբ երգիծական վերաբերմունքի առկայությունը: Ուշադրությանն այն է, որ, ի տարբերություն գեղագիտական մյուս հասկացությունների, կոմիկականն առաջ է գալիս հակակրական զգացմունքների դեպքում: Իրականության հանդեպ մարդու ունեցած գեղագիտական վերաբերմունքի բացասական ձևը կոմիկականն է, որը հենվում է հակակրական զգացմունքների (արհամարհանք, վրդովմունք, ատելություն, զայրույթ և այլն) վրա:

Ակնհայտ է, որ հոգևոր դասի պատկանելության իր դիրքից ելնելով՝ Բուզանդը Արշակունի թագավորների՝ Տիրանի, Արշակի, Պապի հանդեպ խիստ հակակրական վերաբերմունք է արտահայտում բնականաբար այն դեպքում, երբ բախվում են արքունի և հոգևոր շահերը: Բնորոշ է պատմիչի քննադատությունը Տիրան թագավորի նկատմամբ, երբ վերջինս, բրածեծ անելով, սպանել տվեց Հուսիկ քահանայապետին, Արշակի նկատմամբ, երբ վերջինս կառուցել տվեց Արշակավանը, Պապի հանդեպ, երբ իբր թունավորել տվեց Ներսես կաթողիկոսին, առավել ևս, երբ կազմալուծեց Ներսեսի հիմնած կուսանոցները, անկելանոցները, աղքատանոցները, կրճատեց վանքապատկան հողերի թիվը և այլն: Սակայն, կարծում ենք, տվյալ դեպքում այդ քննադատությունը չի վերաձել երգիծանքի մակարդակի, որովհետև պատմիչի միակողմանի սուբյեկտիվությունը խանգարել է, որ ժխտողի հետ ի հայտ գա նաև երգիծանքի մյուս՝ գեղագիտորեն բարձր՝ հաստատող նախասկիզբը:

Փավստոսի Պատմության մեջ համեմատաբար շատ են բնավորության կոմիզմին վերաբերող դեպքերը, բայց այս կամ այն չափով առկա են նաև երգիծանքի ստեղծագործական միջոցներից խոսքի, դրության և գործողության կոմիզմները:

Բնավորությունների կոմիզմ: Մարդկային կերպարը կարող է կոմիզմի աղբյուր լինել, եթե հեղինակը, նրա նկատմամբ երգիծական վերաբերմունք ունենալով, նրա թերությունները, արատները պատկերում է անսովոր եղանակով կամ չափազանցված: Բնավորության կոմիզմն արտահայտվում է մի քանի եղանակներով՝ ուրիշի համար հոր փորել և ինքը մեջն ընկնել, սեփական արարքները թաքցնելու համար խորամանկ ջանքեր գործադրել, սուբյեկտիվ ու օբյեկտիվ հակադրություն, խոսքի ու գործի հակասության և այլն:

Այսպես, ուրիշի համար հոր փորելու և ինքը մեջն ընկնելու եղանակով կերտված երգիծանք է Դղակ մարդպետի հետ կապված դրվագը: Դղակը պարսից Շապուհ արքային խոստանում է նրա ձեռքը հանձնել հայոց Պապ թագավորին: Երբ այդ մասին գաղտնաբար հայտնում են Պապին, և նա իր մոտ է կանչում մարդպետին՝ իբր նրան պատգամավոր ուղարկելու Պարսկաստան: Դղակը մտքում շատ է ուրախանում՝ համոզված, թե խոսքերով կքնեցնի Պապին ու անսպասելի նրա գլխի վերև կկանգնեցնի Շապուհին: Նա ներկայանում է Պապին, մեծարվում վերջինիս կողմից: Ընթրիքի ժամանակ հայոց թագավորը հրամայում է նրան փառավոր զգեստ հագցնել: Զգեստը չափազանց մեծ էր, ծալ-ծալ իջնում էր ներքև: Մարդպետը հագնում, մեջքին է կապում գոտին ու սուրը: Նա գլխի չի ընկնում, որ զգեստի մեծությունն իր գլխի փորձանքն է: Եվ ահա ասպարակիրները, շրջապատելով նրան, անընդհատ քաշքշում են, իսկ

նա թեպետ ձեռքը տանում է զենքերին, բայց դրանք չի կարողանում հանել: Ու Դղակը թեև խոշոր, թիկնավետ մարդ էր՝ պինդ ու խոշոր ոսկորներով, այնուամենայնիվ սակրավորները շրջապատում են նրան ու տանում գլխատելու: Փաստորեն, այստեղ կոմիզմն առաջ է գալիս Դղակի գործողությունների ձախողակությունից, նրա ինքնավստահությունից ու դիմացինին, տվյալ դեպքում՝ Պապ թագավորին թերագնահատելուց:

Բնավորության կոմիզմի եղանակներից սեփական արարքը թաքցնելու համար գործադրված ջանք է Արշակ թագավորի վարվեցողությունը, երբ նա ինքը սպանել է տալիս ողբորդի Գնելին ու հրաման տալիս, որ բոլորը, առանց բացառության, գնան ողբան սպանված Արշակունի մեծ սեպուհին, և ոչ ոք չհամարձակվի հետ մնալ: Ինքը՝ թագավորն էլ, կոծի տեղը գնալով, նստել ողբում էր իր եղբորորդուն, որին ինքն էր սպանել:

Նույն տեսակի մեջ կարելի է դասել Հովհան եպիսկոպոսի այն արարքը, որ նա, մի կեղծավոր մարդ լինելով, մարդկանց աչքում իրեն ձևացնում էր պահեցող ու խարազնազգյաց, մինչև անգամ կոշիկներ չէր հագնում, այլ ամռանը ոտքերին փաթաթում էր հեսկ՝ փոկերից, խսիրից կամ այլ նյութերից ոտքերի փաթաթան, իսկ ձմռանը՝ կեմ՝ խոտից ոլորված չվան:

Խոսքի և գործի հակասության օրինակ է Վարազդատ թագավորի ու Մանվել Մամիկոնյանի բախմանը վերաբերող դրվագը, ուր նախքան հակամարտելը Վարազդատը պատասխան-պատգամ է ուղարկում Մանվելին՝ ասելով. «Մի՛ մեռնիր քո եղբոր (Մուշեղի.- Հ. Վ.) նման: Ես իմ բարերարությամբ քեզ արձակում եմ, ե՛լ ու գնա՝ ճենաց աշխարհը, այնտեղ՝ քո երկրում, ապրիր ու թագավորիր: Իսկ եթե չես կամենա գնալ՝ իմ ձեռքից կմեռնես, ինչպես Մուշեղը մեռավ»[1]: Իսկ ահա մարտի դաշտում Վարազդատ թագավորը փախուստի է դիմում Մանվել զորավարի առաջ, և Մանվելը, նիզակի կոթով ծեծելով, քշում է նրան չորս ասպարեզ:

Երգիծական նմանատիպ դեպք է այն հատվածը, որտեղ Մերուժան Արծրունին մեծապես պարծենում է պարսից թագավորի առաջ, որ Մանվելին բռնելով՝ կապած կտանի արյաց արքայի մոտ կամ գլուխը կտրելով՝ նրան կներկայացնի: Մինչդեռ պատերազմի ժամանակ ինքը՝ Մերուժանն է գլխատվում Մանվելի կողմից:

Իսկ ահա Արշակ թագավորի ու Վաղես կայսեր մասին դրվագում առկա են և՛ **գործողության կոմիզմը**, այն է՝ սպասում, որն ավարտվում է հակառակ արդյունքով, և՛ բնավորության կոմիզմը, այն է՝ սեփական արարքը թաքցնելու

---

[1] Բուզանդ Փ., Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 367-369:

համար գործադրվող ջանք: Այսպես, Արշակ թագավորը Ներսես կաթողիկոսին ուղարկում է Վաղես կայսեր մոտ՝ իբր բանակցությունների, բայց իրականում իր գործերին չմիջամտելու համար: Եվ Վաղես կայսրը, ճիշտ է, Ներսեսին հետ չի ուղարկում, բայց փոխարենը ազատ է արձակում Արշակի եղբորորդիներին՝ Գնելին ու Տիրիթին, որ պակաս մտահոգիչ չէր, ու Արշակի համար դեսպանների հետ գանձեր է ուղարկում: Սա գործողության կոմիզմն է, որին հետևում է Արշակի վարվելակերպի միջոցով դրսևորվող բնավորության կոմիզմը. «Այդ շատ քարերը, ասում էր կայսեր գլխին թափին և ձեր, որ բերել եք: Քարեր մենք էլ շատ ունինք՝ դրանց տվողին և ձեր՝ բերողներիդ, ատամները թափելու. ինչպե՞ս պետք է այս անպատվությանը դիմանամ»[2]: Եվ հրամայում է Վասակ զորավարին զորք հավաքել, գնալ զարնելու և ավարառելու Գամիքի կողմերը (հունաց սահմանի երկրներ):

Հայոց Վասակ սպարապետի ու պարսից Շապուհ արքայի հանդիպման դրվագում էլ համատեղվում են **դրության կոմիզմն** ու բնավորության կոմիզմը: Այսինքն՝ ախոյանների միջև հանդիպում է կայանում, որի ընթացքում տեղի է ունենում բնավորության կոմիզմի բացահայտում՝ հիմնված օբյեկտիվ հակադրության (արտաքին տեսքի ու ներքին ուժի) վրա. «Որովհետև Վասակը փոքր էր մարմնով, Պարսից Շապուհ թագավորը ասաց նրան. «Աղվե՛ս, այդ դո՞ւ էիր այն խանգարիչը, որ այսքան տարի մեզ և քաջերին չարչարեցիր, դո՞ւ էիր, որ այսքան տարի կոտորում էիր արիներին. հիմա ինչպե՞ս պետք է իմ ձեռքից ազատվիս. ես քեզ աղվեսի մահով պիտի սատկացնեմ»: Վասակ սպարապետը, պատասխան տալով, ասաց. «Այժմ ինձ տեսնում ես փոքր մարմնով և սուրս էլ վրաս չէ՝ իմ մեծության չափը չիմացար, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ աղվես դարձա»[3]:

Խոսքի կոմիզմի, մասնավորապես կողմնակի երկխոսության բնորոշ օրինակ է Մանվել զորավարի դեմ մարտի գնացող Մերուժան Արծրունու և բագրևանցի ուղևորների միջև տեղի ունեցած սեղմ երկխոսության դեպքը: Այնտեղ, որտեղով անցնում էր Մերուժանի գունդը, կային լեռներ, որոնց տեղայիններն անվանում էին եղջյուրներ (որպես հատուկ անուն): Մերուժանը ճանապարհին հանդիպած ուղևորներին հարցնում է. «Ո՞ր տեղով է ճանապարհը գնում դեպի Բագրևանդ»: Ուղևորները պատասխանում են՝ ասելով. «Եղջյուրներով»: Մերուժանը շատ է շփոթվում այդ խոսքից ու տրտմում է և հրամայում է ուղևորներին սատիկ քարշել ու ծեծել: Ասել է թե՝ «Եղջյուրներ»

---

[2] Նշվ. աշխ., էջ 165:
[3] Նշվ. աշխ., էջ 261:

պատասխանը Մերուժանը չի հասկանում որպես լեռների հատուկ անուն, այլ հնարավոր է, որ հասկանում է «ճանապարհը վտանգալից է» իմաստով: Իսկ ավելի հավանական է, որ «եղջյուրներ» պատասխանի մեջ իր հանդեպ տեսնում է ինչ-որ ծաղրական վերաբերմունք, այլապես սաստիկ ծեծի չէր ենթարկի ուղևորներին:

Երգիծանքի մի տեսակից մյուսին փոխակերպվելու իմաստով շատ հետաքրքրական է Հայոց Արշակ թագավորին ու պարսից ախոռապետին վերաբերող միջադեպը: Արշակ թագավորը գնում է շրջելու Պարսից թագավորի ախոռներից մեկում, իսկ ախոռապետը, Արշակին տեսնելով, նրան պարսկերեն ասում է. «Այծ-հայերի թագավոր, ե՛կ այս խոտի խուրձի վրա նստիր» (այծ ասելով՝ նկատի է ունեցել այն հանգամանքը, որ Հայաստանը լեռնոտ երկիր է, և հայ մարդիկ մագլցում են լեռների վրա, ինչպես այծերը): Թվում է՝ ախոռապետի այս խոսքը պիտի միանշանակ ընդունել որպես ծանր անարգանք՝ դատելով նաև Վասակ սպարապետի արարքից, թե նա ինչպես տեղնուտեղը գլխատեց պարսից ախոռապետին: Սակայն այդտեղ կամ մի նուրբ անցում, և հենց այդ նրբությունը չնկատելու պատճառով էր, որ ախոռապետը զրկվեց կյանքից: Խնդիրն այն է, որ մինչև թագավոր դառնալը Արշակն իրենց մոտ՝ Պարսկաստանում, ոչ արտոնյալ վիճակում գտնվող մի գերի էր, որին ինքը ճանաչում էր որպես այդպիսին: Բայց այժմ իրադրությունը փոխվել էր. ախոռապետը պիտի գիտակցեր, որ իր առջև արդեն ոչ թե մի հասարակ անձ, այլ մի երկրի թագավոր է կանգնած: Փաստորեն, իրադրության փոփոխության, կողմերի զբաղեցրած դիրքի անհամապատասխանության հետևանքով հումորական անմեղ ծաղրը վերածվել է սատիրական անարգող ծաղրի:

Բուզանդի Պատմության մեջ երգիծանքի բարձրակետը նրա կերտած Հովհան եպիսկոպոսի կերպարն է, որը նաև ընդհանրապես հայ երգիծաբանության սկզբնական ու ազդեցիկ էջերից է: Ի դեմս Հովհան եպիսկոպոսի՝ պատմիչը երգիծական ծաղրի առաջին աստիճանով՝ արհամարհանքի վրա հիմնված հեգնանքով, մերկացնում է հոգևորականության դասի մեջ մուտք գործած շահասիրական ձգտումը, ագահության մոլուցքը: Դիմենք պատմիչի երգիծական նկարագրությանը: Այս Հովհան եպիսկոպոսը, եթե կարելի է նրան եպիսկոպոս կոչել, նախկին Փառեն հայրապետի որդի էր: Չափից դուրս ընկղմված էր ագահության մեջ, Աստծու ահն էլ մոռացել էր ագահության պատճառով այն աստիճան, որ անարժան ու անհավատալի բաներ էր անում: Մի անգամ Հովհանը բռնադատում է մի անծանոթ աշխարհական մարդու. ձիուց ներքև է իջեցնում և ճանապարհից դուրս տեղ հանում: Այնտեղ մարդուն հրամայում է խոնարհվել ու ասում է. «Քեզ երեց եմ ձեռնադրում»: Իսկ նա պատասխանելով

ասում էր իր մասին. «Ես մանկությունից ի վեր եղել եմ ավազակ, մարդասպան, չարագործ, խառնակ վարքի տեր և այժմ էլ նույն գործում եմ գտնվում, ես արժան չեմ այդ բանին»: Ի վերջո, Հովհանը, նրան բռնությամբ գետին գլորելով, ձեռքը դնում է նրա վրա՝ երեց դարձնելու համար: Ապա մոտենում է, բռնում ձիուց և ասում. «Այս ձին էլ ինձ աշխատավարձ լինի, որ քեզ երեց ձեռնադրեցի»: Մարդը ձիու համար համառում է, չի ուզում տալ: Բայց նա բռնությամբ խլում է ձին ու մարդուն ճամփու դնում: Եվ այդ բոլորն անում է ձիու համար: Շարունակության մեջ երգիծանքի ալիքն ավելի է բարձրանում Հովհանի՝ ոչ մի բանի առջև կանգ չառնող վճռականության հետևանքով: Այդ մարդը, տուն հասնելով, հայտնում է իր՝ երեց ձեռնադրվելու մասին, իսկ ընտանիքը նրան ասում է. «Վե՛ր կաց, էլի գնա այդ եպիսկոպոսի մոտ և ասա՛»». «Ես մկրտված չէի, դու ինձ ո՞նց երեց դարձրիր»: Հովհանը ասաց. «Մի սափորով ջուր բերեք»: Ջուրը առավ, ածեց նրա գլխին ու ասաց. «Գնա՛, ահա քեզ մկրտեցի»:

Հովհան եպիսկոպոսի անհեթեթ արարքների շարքն ամփոփվում է թագավորների մոտ նրա խեղկատակային պահվածքով: Երբ այս Հովհանը գնում էր հայոց թագավորների մոտ, նրանց խեղկատակն էր դառնում՝ դարձյալ իր ագահությանը հագուրդ տալու համար: Նա, թագավորների առաջ ձեռների ու ոտների վրա ընկնելով, չորեքթաթ էր տալիս, ուղտի նման կառաչում էր՝ ուղտի նման քայլերով: Կառաչելու ժամանակ մի-մի խոսք էր խառնում կառաչելու ձայնով ու ասում. «Ուղտ եմ, ուղտ եմ, թագավորի մեղքերը բառնում եմ, վրաս դրեք թագավորի մեղքերը, որ բառնամ»: Իսկ թագավորները, գյուղերի կամ ագարակների պարգևագրերը գրելով ու կնքելով, դնում էին Հովհանի կռնակի վրա իրենց մեղքերի փոխարեն:

Դժվար չէ նկատել, որ այստեղ Բուզանդի երգիծանքի ուժը առանձնապես ազդեցիկ է այն պատճառով, որ լինելով հոգևոր գաղափարախոսության կրող՝ պատմիչը չի թաքցրել և չի վախեցել Հովհան եպիսկոպոսի օրինակով մերկացնելու, բացահայտելու նույն այդ հոգևորականության որոշ ներկայացուցիչների «վարքն ու անմտությունը, խենեշ խոսքերն ու գործերը»: Երգիծաբանի՝ կյանքը վերափոխող մեծ դերն էլ հենց այդ խիզախելու՝ արատը վեր հանելու ու գեղագիտորեն քննադատելու կարողության մեջ է: